№ 17 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 28 — 1900 — ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 28 № 17

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ. օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործելու եղանակը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գլխաւոր մասնաժողովի նիստը. Երկրաչարժից վնասվածների օգտին. Նամակ Պետերբուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական ազատամիտները եւ պատերազմը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երկրաչարժի տեղում։

ԳՈՐԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Չենք կարող առանց ուշադրութեան թողնել մի կարծիք, որ լսվում է մեր երիտասարդութեան մի շրջանում և որը ձեւակերպվում է այսպէս. ,,պէտք չէ նը-պաստել երկաթուղիների շինութեանը մեր երկրում, հիմնել գործարաններ և մոցնել մեքենաներ արդիւնագործութեան մէջ՝՝։ Եթէ այդպիսի կարծիք լսվէր մեր ոգէտ մեծամասնութեան բերանից, մենք այդ կընդունենք, իբրև բնական մի երեւոյթ, իբրև նահապետական աշխարհահայեացքի արդիւնք, բայց երբ այդպիսի կարծիք բըղխում է երիտասարդութեան մի շրջանից, որ ազատ է հնադարեան նախապաշարմունքներից և գտնվում է նորագոյն հայեացքների ալիքների մէջ, անհրաժեշտ է բոլորովին ուրիշ վերաբերմունք։

Երկաթուղու, գործարանների և մեքենաների հերքողները աչքի առաջ ունեն այն հանգամանքը, որ դրանց մտնելով ըսկսում է ուժեղ կերպով զարգանալ կապիտալիզմը մեր երկրում, որ այդ կատարելագործված միջոցների շահաւէտութիւնը դառնում է բաժին մեծ մասամբ դրամատերերի դասակարգի համար, իսկ ազգաբնակութեան մեծամասնութիւնը ոչ միայն յաճախ չէ օգտվում նրանց արդիւնքներից, այլ նաև կորցնում է իր նախկին անկախութիւնը և դառնում է ստրուկ մեքենաների։

Այդպիսի կարծիքներ լսվում են և նոյն իսկ լուսաւորված աշխարհում, թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Նորերս վախճանված անգլիական նշանաւոր հասարակական մտածող և գործող Ջոն Ռէօսկին նոյնպէս անձնատուր էր այդ տեսակ խորհրդածութիւնների և մեծ գումարներ ծախսեց վերակենդանացնելու նահապետական և իդիլական կարգերը գոնէ այն շրջանում, ուր նա ապրում էր, բայց ի զուր։

Անկասկած, երկաթուղին և մեքենաները իրանց բարեմասնութիւնների հետ միասին բերում են և մի շարք զրկանքներ ու անյարմարութիւններ։ Սակայն այդ բացասական կողմերը չը պէտք է թելադրեն մեզ հակառակ լինելու կատարելագործութիւնների ներմուծման մեր երկրի մէջ։ Հաղորդակցութեան ճանապարհների այնպիսի մի մեծ կատարելագործութիւն, ինչպիսին է երկաթուղին, մարդկային աշխատանքը թեթեւացնող և ուժեղացնող այնպիսի միջոցներ, ինչպէս են մեքենաները, չեն կարող վնդվել մեր կեանքից, այլ ընդհակառակն նրանք պէտք է մտնեն մեր երկիրը և դառնան մեր կեանքի անհրաժեշտ սեփականութիւն։ Այդ պէտք է այդպէս լինի։ Իսկ այնուհետև հասարակութեան լաւագոյն մասի ջանքերը պէտք է ուղղվեն այն կէտին, որ տեխնիկայի և գիտութեան այդ արգասիքները սկսեն կամաց-կամաց ծառայել հանրութեան շահերին, աշխատողների օգտին և դարձնեն կատարելագործութիւնները իբր միջոցներ հարստացնելու ամբողջ ազգաբնակութիւնը։

Ոչ։ Չէ կարելի հերքել գիտութեան և տեխնիկայի կատարելագործութիւնները։ Նրանք շատ ուժեղ գործօններ են մարդկութեան առաջադիմութեան համար։ Եւ իւրաքանչիւր համայնք և երկիր, որ նրանց կը մերժի, դրանով նա կը մատնի իրան անշարժութեան և անկման այն մեծ մրցութեան մէջ, որ տեղի ունի մեր երկրագնդի վրա։ Պէտք է միայն կարողանալ ծառայեցնելու գիտութեան և տեխնիկայի տուած արդիւնքները ժողովրդի շահերի համար։ Ա յդտեղ պահանջվում է տոկուն աշխատանք ժողովրդական բոլոր խաւերում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Մեր ժամանակներում ամեն ինչ փորձութիւն է, ամեն ինչ կեանքի եւ մահվան կռիւ է պարունակում իր մէջ։ Հանճարեղ Դարվին բաց արեց մարդկութեան առաջ կեանքի ամենահիմնական էութիւնը—գոյութեան կռիւը եւ այդ գիւտից յետոյ հարիւրաւոր ուրիշ մանր ու խոշոր կռիւներ էլ գտնվեցան պատերազմի այն դաշտում, որ կոչվում է աշխարհ։ Նոյն իսկ մահը, կեանքի հետ ծնված այս անողորմ բռնակալը, ինչպէս նորերումս ասեցինք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ փոքրիկ, անտեսանելի բջիջների կռիւ։ Կռիւ... այս բառն արդէն ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս, որ յաղթել, այսինքն ապրելու իրաւունք ձեռք բերել կարող է միայն նա, ով լաւ պատրաստված է, ով աւելի յարմարված է կռուին։ Ահաւոր մարտերի ընդհանուր դաշտում մի պատկեր էլ ներկայացնում է լեզուների կռիւը, որի մասին խօսում է Ժան Ֆինօ «Revue des Revues» հանդէսի մէջ։ Ինչ ուզում է թող ասէ թնդանօթի բերանը—յաղթում է ոչ այնքան բռի ոյժը, որքան մտաւոր գերազանցութիւնը. եւ մի ազգ աշխարհի մէջ չէ կարող աջողութիւն ունենալ, եթէ մնայ յետամնաց, անպատրաստ, եթէ նա չը կարողանայ ցոյց տալ իր հոգեկան մեծ կարողութիւնը։ Լեզուն, ինչպէս մի ազգի ստեղծագործական ընդունակութեան արտայայտութիւն, գոյութեան կռիւի մէջ պիտի ունենայ կենսունակութիւն, արշաւանքներին դիմանալու ճկուն յատկութիւն, թէ չէ՝ աւելի ուժեղը, աւելի լաւ պատրաստվածը կը յաղթէ նրան, այսինքն կը խլէ նրանից այն ասպարէզը, ուր նա գործում էր։ Հէնց այդ պատճառով է, որ ֆրանսիացի գրողը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ ֆրանսիական լեզուն ընկնում է, մինչդեռ անգլիական, ռուսաց եւ գերմանական լեզուները անդադար մեծ նուաճումներ են անում։ Ֆրանսերէնը մի ժամանակ աշխարհի ամենատարածված լեզուն էր, իսկ այժմ նա բռնում է չորրորդ տեղը. առաջնութիւնը պատկանում է Անգլիային, որից յետոյ գալիս է Ռուսաստանը, ապա Գերմանիան։

Լեզուն մի գետ է, որ միացնում եւ մօտեցնում է ժողովուրդները—ասում է ֆրանսիական գրողը.—նա ոչ միայն հոգեկան եւ բարոյական կեանքի բարձր արտայայտութիւն է, այլ եւ նիւթական փոխանակութիւնների գործիք է։ Պարզ է, ուրեմն, որ լեզուն որքան շատ ունի կողմնակիցների քանակութիւն, այնքան աւելի է ապահովված նրա ապագան աշխարհում։ Որքան շատ են մի յայտնի լեզուով խօսող մարդիկ, այնքան շատ հաւանականութիւն կայ, որ այդ լեզուի հայրենիքում կաճէ մտաւոր ստեղծագործութիւնը եւ նրա ազդեցութիւնը կը տարածվի եւ երկրի սահմաններից դուրս։

Այդ միայն տիրապետութեան, այսպէս ասած՝ միջազգային հասակի վերաբերմամբ։ Բայց լեզուների մրցութիւնը այդ ձգտման մէջ չէ սահմանափակվում։ Կան շատ ազգեր, որոնք այդքան մեծ յաղթանակի մասին չեն էլ երազում եւ որոնց համար լեզուի հարցը ունի տեղական, բուն ազգային հանգամանք։ Ով փոքր ի շատէ ծանօթ է այն կատաղի կռուին, որ Աւստրիայում մղում են գերմանական եւ չէխական լեզուները, նա գիտէ, որ չէխերը շատ քիչ են մտածում այն մասին, թէ իրանց հայրենիքից դուրս իրանց լեզուն կը տարածվի երբ եւ իցէ թէ ոչ. եւ եթէ նրանք այնքան տոկուն պատերազմ են մղում գերմանական լեզուի դէմ, պատճառն այն է, որ տանուլ տալ կռիւը կը նշանակէր ոչնչացնել չէխ ազգութեան ինքնուրոյնութիւնը։ Բայց ինչպէս պէտք է լեզուին կենսունակութիւն տալ, որպէս զի նա գոյութեան կռիւը աջողութեամբ վարէ եւ չընկճվի մրցութեան դաշտում։ Դիմենք դարձեալ Ֆինօին։ Ֆրանսիական լեզուն անկումից ազատելու համար նա առաջարկում է իր հայրենակիցներին դարձնել ֆրանսիական լեզուն եւ ֆրանսիական մամուլը ապաստարան եւ օրգան այն ամենի, ինչ աչքի ընկնող է, տաղանդաւոր, ազնիւ եւ լոյս է տեսնում ամենուրեք։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏԵՂՈՒՄ

(Նամակ Բարալէթ գիւղից)

II

Փոքրիկ գետակի ափին, բլրակների մէջ, երեւում էր Արագովան։ Ես մտադիր էլ չէի մտնել այդ գիւղը, սրտաւորով չտապում էի հարիւրաւոր զոհերի անքանդակ սեւ գերեզմանները տեսնելու։ Բայց ակամայից ուշքս գրաւեցին գիւղի ծայրում սպիտակ ձիւնի վրա տարածված սեւ-սեւ կոյտերը. դրանք անտուն, անապաստան գիւղացիների ժամանակաւոր վրաններն էին։ Ցիշեցի Սիբիրիայի էսքիմոսներին, որոնց բնակարանների մասին գաղափար տալու համար ահագին ժամեր էր գործադրում մեր աշխարհագրութեան ուսուցիչը։

Մօտ մի քառակուսի սաժէն տարածութեամբ փորած էր ձիւնը կէս սաժէն խորութեամբ ու ձիւնի պատերի վրա ձգած թեթեւ տախտակները ծածկված էին խոտէ խսիրներով ու բրդէ թաղիքներով։ Ես զարմացայ թէ ինչու էին չնված այդ մահագուժ որջերը, քանի որ Արագովան, քաղաքում ստացված տեղեկութիւնների համաձայն, չը վնասված գիւղերի թւումն էր։ Մտայ այդ «չը վնասված» գիւղը, սակայն տուն չը գտայ, որ փրած բաժանմունքներ չունենար։ Նոյն իսկ արքունական դպրոցի՝ կրով ու քարով չինած հոյակապ շինութիւնը միանգամայն քայքայվելու եւ տապալվելու վրա էր։ Նոյն դրութեան մէջ գտայ եւ ճանապարհիս վրայի Զակ, Բուզաչէն, Դրկնա ու միւս գիւղերը. նոյն կիսաւեր տները, նոյն գայլի որջերը, խսիրներով ու փալասներով ծածկված։ Ժողովուրդը, կին ու տղայ, գրեթէ բոլորն էլ դուրսն էին, խումբ-խումբ հաւաքված լուռ քչփչում էին, կարծես մէկից խիստ քաշվում էին։ Ահռելի սարսափի սեւ դրոշմն իսկոյն նըկատելի էր նրանց դժգոյն երեսին։

Սողում է սահնակս հարթ ձիւնի վրայով. մօտենում ենք Մերենիային։ Սիրտս տրոփում է ու ակամայից կարծես մի տեսակ երկիւղ տիրում է ինձ։ Անգութ արեւն էլ մօտենում է իր վախճանին, կարծես նա էլ զարհուրած ընդհանուր սարսափից, երես է դարձրել աւեր Զաւախքից ու չտապում է մօր տաք գիրկն ընկնել։

Ձիերը կանգնեցին։

—Շտապիր, կառապան, ուշանում ենք։

—Ձիերը խրտնում են, չեն գնում, առաջը ինչ որ սեւ բան է երեւում, պատասխանում է իր արհեստին յատուկ անտարբերութեամբ դուխաբոր կառապանս։

Մարակի մի երկու խիստ հարուած ստիպեցին ձիերին մի քանի քայլ եւս առաջ գնալ, բայց դարձեալ ականջները ցցած երկչոտ նապաստակի պէս կանգնեցին։ Կարծես իմաստուն կենդանիներն էլ չէին ուզում ականատես լինել բնութեան բօպէական անգութ խաղին։

Իջայ սահնակից, որ տեսնեմ թէ ինչից են խրտնում ձիերը։ Գնում եմ առաջ, եւ ինչ եմ տեսնում։ Ճանապարհի կողքին երկու փոքրիկ երեխաներ, նստած ձիւնի վրա, խիստ սառնամանիքից կապտած ձեռները դրած արցունքոտ աչքերին, աղիողորմ լալիս են։

—Մարի ջան, մեռայ, մարի ջան։

—Օ՛ֆ սառայ, ապա (մայրիկ) ջան, Գուրդէնիդ թողիր ուր գնացիր։ Մի լա, Նազօ ջան, մի լա, ամիս (պապս) կուգայ կերթանք ապայիս։ Զէ, ամիս ըսաց թէ ապաս քեռանցս է... Ա՛խ ապա ջան, ինչի մեզի թողիր գնացիր, ինչտէիր (չը գիտէիր) թէ Նազօդ կուլայ։ Ամի ջան, արի, Նազօն կուլայ. Նազօ ջան, մի լա Նազօ, աչէ (նայիր) ես ա կուլամ...։

Սիրտս կտրատվեց. երկու փոքրիկ մանուկներ, անտուն անտիրական, անկարեկից երկնքի բաց ու պաղ հովանու տակ որոնում էին իրանց մօրը, սրտակոտոր լացով կանչում անուշ «ապային», որ թոռների ալ բոցերի մէջ կրակխորով էր եղել։ Խեղճ մանկիկներ, չը գիտէին, որ իրանց թշուառ ապային այլ եւս տեսնելու չէին։

—Տղա՛ք, ինչի կուլաք, հարցրի ես, մօտենալով նրանց, կարծելով թէ կարող եմ իմ ներկայութեամբ նրանց լացն ընդհատել. բայց նրանք ինձ տեսնելով մի բօպէ անթարթ երեսս նայեցին ու ապա աւելի եւս խիստ սկսեցին հեկեկալ։

—Մի լա՛ք, գառնուկներս, մի լա՛ք, ես ձեզ կը տանիմ ձեր «ապային»։ Բայց ձեզ ո՞վ բերեց էստեղ։

—Ամիս (պապս) բերեց։

—Ինքն ո՞ւր գնաց։

—Գնաց որ կովը բերէ։

—Ի՞նչ կով։

—Մեր Զէյրանը (կովի անունն է) հէտվիս պիտի տանէինք քեռանցս, ճամբիէցէն ետ փախաւ գեղ, պապս գնաց որ բերէ, մենք մնացինք մենակ գիւղին (դաշտի) օրթան (մէջ տեղը)։

Ծերուկ «ամին», սեփական տան սառը փլատակների տակ թողած իր մտերիմների հետ եւ ամբողջ կեանքի բոլոր դառը վաստակը, իր աւերակ «օջախի» վերջին մնացորդները՝ ջուխտակ թոռնիկները ու միակ կովն առած, փախչում է հայրենի անհիւրընկալ յարկից։

—Դէ արի՛ք արի՛ք, իմ սանքին, ես ձեզ կը տանիմ ձեր «ապային»։

Փոքրիկ Նազօն, որ մինչեւ այդ վախվխելով երեսս էր նայում, երբ լսեց «ապայի» անունը, կէս ժպտալով վեր թռաւ տեղից ու մօտենալով ինձ հարցրեց, կարծես «ապայի» քաղցր անունը բացեց նրա թոթով լեզուն։

—Տացու ծան, դու գիտես քեռանցս տունը, ապաս հոն է։ Ամիս ըսաց թէ էլթանք ոլա քեռիս ինձի կանգեռ պիտի տայ։

—Գիտեմ, գիտեմ փոքրիկս, արի՛ք սանքայիս էրթանք, ամիդ էլ վերցնենք ու էրթանք քեռանցդ։

Տեղաւորեցի փոքրիկներին սահնակիս մէջ ու պայանք առաջ։

Երեւում է Մերենիան, սիպտակ ձիւնի անսահման ծովի մէջ մի սեւ օազիս։ Սիրտս տրաքում է, մթթէ դա այն Մերենիան է, ուր ես քանի քանի գիշերներ ճանապարհորդութիւններիս ժամանակ գիշերել եմ։ Լուռ է չորս կողմս, ձէն-ձուն կտրել է, էլ չէ լսվում անցորդի ճանապարհը կտրող շների հաչոցը, գառ ու ոչխարի քաղցր մայիւնն ու մատղաշ հորթերի անուշ բառաչը։ Մերենիան մարել է, հարիւրամեայ աւերակի պէս քար քարի վրա չէ մնացել։ Լուռ են եւ փոքրիկ ուղեկիցներս, որ տաք վերարկուիս տակ գրեթէ արդէն նիրհում էին։ Միակ կենդանութեան նշաններ ցոյց տուող արեւն էլ չը կայ այլ եւս։ Սար ձոր քիթ-մուրթ կախել, խռոված մանկան պէս կարծես ուզում են լաց լինել։ Մթնում է. գնա՛ արեւ, գնա, մտի՛ր մօրդ անուշ գիրկը, բայց այս անտէր փոքրիկներին ո՞ւմ խորթ գիրկը պիտի պատսպարէ ու փաղաքշէ։

Մինչդեռ խոր մտածմունքներիս մէջ ընկղմված ինքս ինձ հետ խօսում էի, սահնակս կանգ առաւ։

—Հասանք պարոն, խոր մտքերիս մէջ, արթնացրեց կառապանս։ Սթափվեցի. ահա եւ Մերենիան։

Զավախեցի

բողջ աշխարհում. առաջարկում է հեշտացնել քերականութիւնը եւ ուղղագրութիւնը եւ ամեն դիւրութիւն տալ լեզուն ուսումնասիրելու համար։ Բայց այդ բոլորը գլուխ բերելու համար հարկաւոր են ընդունակ մարդիկ, հարկաւոր է, որ ստեղծագործող ոյժեր դուրս գան։ Լեզուների մրցութիւնը մեր ժամանակի ամենանշանաւոր երեւոյթներից մէկն է եւ այն ազգը, որ չէ կարողանում իր լեզուն կենդանի, հաստատուն, ծաղկած պահել, պիտի հաշուի տխուր եւ յուսահատական ապագայ ունենալու անհրաժեշտութեան հետ...

*

Դարամուտի հարցը Կ. Պոլսի հայերի մէջ էլ բաւական շփոթութիւն է առաջացրել. լրագիրներից մէկը առաջարկեց ընդունել 1900 թուականը քսաներորդ դարի սկիզբ, որովհետեւ... կան ծերեր, որոնք անպատճառ ուզում են տեսնել դարամուտը. եւ ճշմարիտ, ինչու հէնց գոնէ ի պատիւ այդ սպասողների չը գործել մի այդպիսի սխալ, որից, յամենայն դէպս, վնաս չը կայ։ Երեւի այդ բարի կամեցողութեամբ ղեկավարվելով, «Արեւելքը» յունվարի 1-ին յայտարարեց, որ քսաներորդ դարը արդէն մտել է։ Բայց հրպիսի մոայլ տրամադրութեան մէջ դրեց լրագիրը իր այդ առաջնորդողը. ոչ շնորհաւորութիւն, ոչ յոյսեր, ոչ գոհունակութիւն։

Այն հայ քուրմերը որ ասկէ հարիւրաւոր դարեր առաջ կռապաշտ հայութեան տերեւներու լեզուն ու պատգամը կը մեկնէին, աւելի նիւթապաշտ չէին քան մեր արդի եկեղեցականութիւնը։ Այն հայ ոստանիկը կամ աւատուհին որ կռատանց մէջ խօլական տենչանքներու յագուրդ կը փնտռէին, աւելի անձնապաշտ չէին քան արդի հայ ընկերութիւնը։ Ինչով կը զանազանվի այսօր հայ ժողովուրդը, կրօնական թէ աշխարհական, հեթանոս հայութենէն. եւ մանաւանդ մեզի, հայոցս համար, պատմական սխալ մը չէ 20-րդ դարը, այսինքն Քրիստոսի 1900 ամեակը տօնել, երբ մեր հասարակութիւնը կռապաշտութենէն բան մը մոռցած չէ եւ քրիստոնէութենէն ոչինչ ուսած։

Զափազանց խիստ է ասված եւ, կաւելացնենք, նոյն իսկ շատ անիրաւացի կերպով։ Այժմեան հայերի եւ հին հեթանոս հայերի մէջ ոչինչ զանազանութիւն չը գտնել—այդ անարդարութիւնը, կարծում ենք, հէնց դրանից է առաջացել, որ լրագիրը անժամանակ է ինքն իրան մոցրել քսաներորդ դարի մէջ։ Բայց վնասը մեծ չէ. Օրմանեան պատրիարքը մի քարոզ է ասել, որի մէջ հաստատել է, թէ քսաներորդ դարը եկող տարի պիտի սկսվի. եւ եթէ յիշենք, թէ փարաջան պօլսեցիների աչքում որքան ահագին հեղինակութիւն ունի, պէտք է ենթադրենք, որ լրագիրն արդէն խոստովանած կը լինի իր սխալը։ Իսկ սա քիչ բան չէ. մի ամբողջ տարի կայ առջեւում, եւ բաւական ժամանակ կը լինի մոռացելու, թէ ճիշդ որ ոչինչ զանազանութիւն չը կայ այնքան խոր հնութեան եւ մեր ժամանակի մէջ։ Ցուսանք որ քսաներորդ դարի իսկական սկզբում «Արեւելքը» այս հարցը վճռած կը լինի եթէ ոչ քրմերի եւ այժմեան հոգեւորականների, գոնէ հայ ժողովրդի անցեալի եւ ներկայի համեմատութեան վերաբերմամբ։

ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Յունվարի 26-ին, չորեքշաբթի երեկոյեան, Թիֆլիսի Նահանգապետի բնակարանում նրա նախագահութեամբ կայացաւ Ախալքալաքի գաւառի երկրաշարժից վնասվածներին օգնող Թիֆլիսի գլխաւոր մասնաժողովի նիստը, որ թւով հինգերորդն է։

Մասնաժողովի նախագահը զեկուցեց նոր ստացված նուէրների մասին։ Նուիրատուութիւններ ստացվել են Ռուսաստանի ներքին նահանգներից եւ Սիբիրից։ Նահանգներից յիշենք Պերմի, Վօրոնեժի, Զերնիգովի, Տավրիկեան, Էստլեանդիայի, Տօբոլսկի, Կուբանի, Կոստրոմայի նահանգները։ Խոշոր գումարներից յիշենք Եր. Բուդաղեանի գրասենեակից 5000 ր., Կարմիր Խաչի ընկերութիւնից 2000 ր., Պետերբուրգի եւ Մոսկվայի եկեղեցիների հոգաբարձութիւնից 1000 ր. եւ այլն։ Մասնաժողովը մինչեւ այժմ ժողովել է մօտաւորապէս 140,000 բուբլի գումար։

Ց. Խաչատրեան զեկուցեց, որ մասնաժողովի յանձնարարութեամբ նա Ախալքալաքի հիւանդանոցի համար գնել է ճերմակեղէն 527 բուբ. 55 կոպէկի։

Կարդացվեցին Ախալքալաքի գաւառապետից ստացված հեռագիրները, որոնցից երեւում է հետեւեալը. 1) Սկսվել է սաստկած կենդանիների մարմինների այրելը. արդէն այրված են 251 հատ. 2) գլխաւոր մասնաժողովի ուղարկած բժիշկ Ահարոնեան գործում է Ախալքալաքի հիւանդանոցում ամսի 16-ից. նրան յանձնված է վարակիչ ախտերի հիւանդանոցը. 3) Ախալքալաքում եղած զօրագունդը տեղաւորված է դուխոբօրների գիւղերում, մինչեւ վերջանայ քաղաքում գտնված զօրանոցների վերանորոգութիւնը. 4) Նահանգական անասնաբոյժ Մակարով շրջագայեց գիւղերը եւ կազմակերպեց այրելու գործը. 5) Մերենիայում եւ Սամսարներում կենդանիների մարմինները դուրս հանելը վտանգաւոր է, որովհետեւ կարող են տեղի ունենալ դժբաղդութիւններ. անհրաժեշտ է վերահսկող. 6) յունվարի 21-ի գիշերը լոյս 22-ին տեղի ունեցաւ երկրաշարժի սաստիկ ցնցում, որի հարուածները Սամսարում զգացվեցին աւելի ուժեղ կերպով, քան դեկտեմբերի 19-ին, բայց մարդկանց հետ վնաս չը պատահեց եւ 7) հարց է ծագել տեղական կոմիտեում, թէ պէտք է օգնել միայն գիւղացիներին, թէ նոյնպէս վաճառականներին, քահանաներին եւ կալուածատէրերին։

Վերջին հարցի առիթով նահանգապետը պատասխանել էր, որ գիւղական այն քահանաներին, որոնք ապրում են գիւղացիների նման նոյն աստիճան բարեկեցութեամբ, պէտք է օգնել գիւղացիների հետ հաւասարապէս, իսկ աւելի հարուստ քահանաների, վաճառականների եւ կալուածատէրերի դրութեան եւ կրած վնասների մասին մանրամասն զեկուցանել գլխաւոր մասնաժողովին, որը եւ կը յայտնի օգնելու որոշումը։ Նահանգապետի այդ հեռագիրը ընդունվեց ընդհանուր հաւանութեամբ։

Նահանգապետը զեկուցեց, որ յատուկ հեռագրով նա կարգադրել է. 1) մշակների վարձատրութեան գործը կանոնաւորել, արձանագրելով յատուկ գրքոյկներում նրանց կատարած աշխատանքը. 2) ձեռքից չը թողնել դուխոբորներին, եւ նրանց վարձել, աշքի առաջ ունենալ նրանց սայլերի լաւ յատկութիւնը եւ այն հանգամանքը, որ նրանք երկրաշարժի առաջին օրերը այնքան անձնուիրաբար գործեցին եւ 3) մոցնել բոլոր գործողութիւնների մէջ միութիւն։

Միւս անգամ կը հաղորդենք նահանգական անասնաբոյժ Մակարովի զեկուցումը եւ մասնաժողովի արած որոշումները։

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք երկրաշարժից վնասված գիւղացիների օգտին հետեւեալ նուէրները.

Արդահանից՝ Բ. Տէր Պողոսեանից եւ Պ. Ալէքսանեանից 57 ր. 43 կ. նուիրատուներն են. Արդահանի հայ-կաթոլիկների եկեղեցու գանձանակից 4 ր. 38 կ., Գ. Ղազարեան 5 ր., Ս. Վարդապետեան, Պ. Ալէքսանեան եւ քահ. ոմն—2-ական ր., տ. Ղազարեան, Մ. Նազարեան, Աննա Աշօեան, Մ. Քիւրքչեան, Ց Մաթիլեան, Քօթանով, Վ. Ճուարիդզէ, Ա. Միրզոեան, Ց. Գաթէնեան, Ա. Թօքմաճեան, Եղիսաբէթ Վարդապետեանց, Կ. Ղազարեան, Կ. եւ Վ. Միլքիճանեանց, Եղբ. Դէցօչվիլի, Սօֆիա Մահ.-Իկնատով, Զ. Աղնաուրեան, Պ. Կարալեան, Ա. Դիրլուկեան, Ց. Վէքիլեան, տէր-Պողոս Բանտուրեան, Բ. Զափարեան եւ Օ. Ստանիսլավեան—1—ական ր., Անյայտ ոմն 90 կ., Պ. Ապօեան, Պ. Նազարեան, Ի. Քէլէչեան, Ա. Դիտմարեան, Ե. Աշօեան, Եղբ. Զաւուշեան, Ց. Միլքիճանեան, Է. Դարմանեան, Վ. Մէնէմշեվ, Փ. Մէնէմշեվ, Ա. Քօթանով, Ց. Օգօնեան, Թ. Պաղչինեան, Ս. Միքելադզէ, Կ. Առաքելեան, Ռ. Ճինավուզեան, Զ. Գաթէնեան, Մ. Վարդապետեան, Ց Տէր-Բաղտասարեան, Ս. Պապիկեան, Վ. Ստանիսլավեան, Մ. Տէր-Բաղտասարեան, Մ. Ղասապ-Պապով, Վ. Կարալեան, Պ. Դիրլուկեան, Ս. Իվանադզէ, Ց. Դարբինեան եւ Ց. Ալաճաճեան—50-ական կ., Պ. Այվազեան, Կ. Գիւռճեան, Պ. եւ Մ. Մալխաղեան, Մ. Զաքարեան եւ Կ. Մուրադեան, Հռիփսիմէ Ալաճաճեան—40-ական կ., տ. Գաթէնեան 45 կ., Ս. Պոյաճեան, Մ. Փուղինեան, Ս. Կարապետեան եւ Ֆ. Տէր-Պողոսեան—25-ական կ., Բ. Աշօեան եւ Գ. Այվազեան—30-ական կ., Մ. Քուրքչեան, Ն. Առմանեան, Ա. Սաֆարզադէ եւ Խ. Մինասեան—20-ական կ., Ֆ. Ստանիսլավեան եւ Գ. Տէր-Պողոսեան 15-ական կոպէկ։

Թիֆլիսից՝ Ա. Մահտեսի-Յակոբեանից 6 ր. 70 կ. նուիրատուներն են. Ա. Մահտեսի-Յակոբեան, Խ. Ասրիեան, Ա. Տէր-Պողոսեան—1-ական ր., Կ. Ասրիեան, Ց. Ասրիեան, Անյայտ ոմն, Բ. Նազարեան, Մ. Պետրոսեան,—50-ական կ., Հ. Տէր-Պողոսեան 25 կ., Ա. Մ. Յակովբեանց, Պ., Ս. եւ Մ. Նազարեան, Ա. Ավալեան, Ց. Գէորգեան—20-ական կ., Ա. Սաֆարով 10 կ., Սամուէլ 5 կոպէկ։

Վօրոնէժից՝ Է. Թումանեանից 32 բուբլի, որ նուիրել են Մ. Շօրշօրեանի գործակատարները։

Ղզլարից՝ Մատթէոս Աբրահամեանից 25 ր.։

Պադուայից (Իտալիա)՝ հայ ուսանողներից 50 իտալական լիրա։

Արմաւիրից՝ Ս. քահ. Հալաճեանից 40 բուբլի, ժողոված հայ ժողովրդից։

Եալտայից՝ Յակոբեանից 3 բուբլի։

Մոզդոկից՝ Անյայտից 2 բուբլի։

Բալախանից՝ Մանթաշեանի նաւթահանքի Խալաիու մասի բանուորներից 20 ր. 20 կ. նուիրատուներն են. Գ. Л. Шпрингеръ 2 ր., Շ. Շիրինեան 1 ր. 10 կ., Գ. Մանուչարեան, Ա. Ս. Աբազեան, Ա. Խաչեան, Խ. Մէլիք-Շահնազարեան, Գ. Յովհաննէսեան, Ց. Գրիգորեան, Ս. Արզումանեան—1-ական ր., Ա. Գաբրէլեան, Ա. Սարգսեան—60-ական կ., Ց. Աղաբէկեան, Հ. Սիմոնեան, Գ. Խաչատուրեան, Գ. Տէր-Մինասեան, Գ. Դաւթեան, Ց. Հայրապետեան, Գ. Դալլաքեան—50-ական կ., Ի. Մատոեան, Բ. Ա. Առաքելեան, Ց. Բայրամեան, Ս. Բայրամեան, Ղ. Ղիասեան, Վ. Ղիասեան, Թ. Զաքարեան, Խ. Առաքելեան, Խ. Ղարաբէկեան, Դ. Վարդանեան—25-ական կ., Ն. Սայիլեան, Ի. Ասրիեան, Բ. Կարապետեան, Կ. Յարութիւնեան, Մ. Սալիմ-Խան-օղլի—20-ական կ., Գ. Ալիխանեան, Հ. Արզումանեան, Բ. Աբրահամեան, Գ. Ճաղարեան, Ծ. Համբարձումեան, Ռ. Տէր-Աստուածատուրեան, Ա. Միքայէլեան, Ս. Այվազեան—15-ական կ., Հ. Միքայէլեան, Զ. Մկրտչեան, Մ. Հայրապետեան, Շ. Յարութիւնեան, Մ. Յակովբեան, Ա. Գրիգորեան, Մ. Գրիգորեան—10-ական կ., Ա. Ասրիեան 5 կոպէկ։

Ընդամենը 186 բուբլի 33 կոպ. եւ 50 իտալական լիրա։

Մինչեւ այժմ ստացել ենք 21240 ր. 77½ կոպէկ, երեք ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Ուղարկել ենք 20,000 բուբլի։ Մեզ մնում է 1240 ր. 77½ կ., երեք ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։

Երկրաշարժից վնասվածների համար Եկատերինոդարից Գարեգին քահ. Բաղդասարեան ուղարկել է մեզ վեց հակ զանազան զգեստեղէն, որ նուիրել են զանազան անձինք։ Անկարող լինելով տպագրել նուիրատուների մանրամասն ցուցակը, մենք բաւականանում ենք բերելով նուիրատուների անունները։ Դրանք են. Կ. Թամազեան, Մ. Բարոնեան, Ա. Մամիկոնեան, Ց. Թոխեան, Ա. Զերնեան, տ. Արզումանեան, Ե. Խոջաբարոնեան, Ս. Խարագիւլեան, Կ. Պետրոսեան, Մ. Բաղարսուկեան, Տ. Արզումանեան, Բ. Զերաչեան եւ Մ. Խաբախբաչեան, տ. Կիւրեղեան, Ղ. Էրգանով, Գ. Յարութիւնեան, Սիֆէրով, Գ. Թորոսեան։ Այդ չորերը մեր կարգադրութեամբ Բաթումից ուղարկված են Բօրժոմ եւ այնտեղից Ախալքալաք՝ մասնաժողովին։

Ստացել ենք նաեւ Բագուից, Գաբրիել Բէգլարեանից, մի հակ շորեղէն, որ այսօր ուղարկեցինք Ախալքալաք։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յունվարի 21-ին

Նորերս այստեղ լոյս տեսաւ բժիշկ Բուդուղեանի մի նոր գրքոյկը՝ «Ինչ է անառակութիւնը» վերնագրով։ Սա առաջին գրքոյկը չէ, որ հրատարակում է պ. Բուդուղեանը ժողովրդական ընթերցանութեան համար. նրա նախկին հրատարակութիւնները բաւականաչափ տարածված են մեր մէջ եւ, պէտք է ասել, հասկանալի եւ օգտաւէտ ընթերցանութեան նիւթ են կազմում։

Յարգելի բժշկի նպատակն է տալ ընթերցողներին համառօտ տեղեկութիւններ մի քանի հիւանդութիւնների մասին, որոնք, հետեւանք լինելով տգիտութեան կամ անառակ կեանքի, ոչ միայն վնասում են հիւանդներին, այլ եւ դնում են իրանց սոսկալի դրոշմը նրանց սերունդների վրա. այդ հիւանդութիւնների չնորհիւ «երջանիկ եւ ուրախ կեանքի փոխանակ, առում է բժիշկ Բուդուղեանն իր նոր գրքոյկի առաջաբանում,—նիհարութիւն, դժգունութիւն, գլխացաւ, եւ որ ամենից ցաւալին է՝ անպտղութիւն, անզաւակութիւն»։

Որքան ցաւալի, նոյնքան եւ ճիշդ իրողութիւն է այս. տգիտութիւնն ու անառակ կեանքը ձեռք ձեռքի տուած թուլացնում են ոչ միայն մեր ոյժերը, այլ եւ զրկում են մեզ սերունդ ունենալու բաղդաւորութիւնից եւ կամ առաջացնում են թուլամորթ ու եռանդից զուրկ հիւանդոտ զաւակներ։

Այս տեսակէտից չէ կարելի առանց գոհունակութեան յիշել բժիշկ Բուդուղեանի հրատարակութիւնները, որոնք, պէտք է յուսալ, որոշ չափով կունենան բարերար ազդեցութիւն։ Մնում է միայն ցանկալ, որ այդ տեսակ գրքերը, ինչպէս «Ինչ է անառակութիւնը» եւ շուտով լոյս տեսնելիք միւս գրքոյկները մեծ չափերով տարածվեն մեր ժողովրդի զանազան խաւերում, մանաւանդ որ նրանք գնի կողմից մատչելի են նոյն իսկ ամենախեղճ դասակարգին. օրինակ «Ինչ է անառակութիւնը» գրքոյկը բաղկացած է 73 մաքուր տպված երեսներից եւ արժէ միմիայն 5 կոպէկ։

Ե—ք.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ այրի Նատալիա Սաֆարեանց, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Միքայէլ Սաֆարեանցի, համաձայն նրա կտակի տրամադրութեան, նուիրել է Ներսիսեան դպրոցին 3000 ր., որպէս զի նրա տոկոսով մի թոշակաւոր պահվի դպրոցում, եւ 1000 բուբլի՝ նոյն դպրոցում հաստատված թոշակարկղին, որպէս զի նրա տոկոսով թոշակ տրվի երկար տարիներ դպրոցում ծառայած ուսուցիչներին եւ ուրիշ պաշտօնեաներին։

—

Ահա մի քանի օր է, որ Թիֆլիսում դարնային տաք եղանակներ է անում։ Ցերեկով օդը զգալի կերպով տաքանում է։ Փողոցների մշտական ցեխը վերջապէս անհետացաւ։

—

Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնից ստացանք Մանկական գրադարան անունով նրա 170-րորդ հրատարակութիւնը «Եօթն ագռաւ», հեքիաթ, փոխադրութիւն Լեւոն Մ. Ադամեանի, տպագրված Թիֆլիսում Մարտիրոսեանի տպարանում 1899 թուին։ Գինը 40 կոպէկ է։ Գիրքը հրատարակված է Պողոսեանի գումարով եւ զարդարված է գեղեցիկ պատկերներով։

—

Ենթադրութիւն կայ առաջիկայ 1901 թուականին Թիֆլիսում կազմել կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէս ի յիշատակ Վրաստանի Ռուսաստանի հետ միացման հարիւրամեակի եւ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հիմնարկութեան յիսնամեակի։ Ինչպէս հաղորդում են մեզ, ցուցահանդէսի համար 80,000 բուբլուց աւելի ծախս է նախատեսվում։

—

Այս ամառ, որպէս լսել է «Кавказъ» լրագիրը, Կովկաս կայցելէ Խարկովի համալսարանի պրոֆէսօր Կրասնով, որը բազմաթիւ հետազօտութիւններ ունի մեր երկրի բնագիտութեան վերաբերմամբ։ Պրոֆէսօրի այցելութեան նպատակն է հետազօտել Անդրկովկասի մի քանի տեղերի բուսականութիւնը։

—

Պետերբուրգում հիմնվում է «Արեւելագիտութեան ընկերութիւն», որի նպատակն է ռուսաց առեւտրի եւ արդիւնաբերութեան համար նոր շուկաներ գտնել՝ մի կողմից արեւելեան ազգերի մէջ Ռուսաստանի մասին ճիշդ եւ կանոնաւոր տեղեկութիւններ տարածելու նպատակով, միւս կողմից ծանօթացնելով ռուս հասարակութիւնը Արեւելքի նիւթական կարիքների եւ հոգեւոր կեանքի հետ։ Այսպիսով ընկերութիւնը պէտք է նպաստէ երկու աշխարհների իսկական եւ հաստատուն մերձեցմանը, ծառայելով որպէս միջնորդ ռուսաց կուլտուրան եւ արդիւնաբերութիւնը կայսրութեան սահմաններից դուրս տարածելու գործին։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված գիւղական ազգաբնակութեան մէջ ապօրինի զաւակների դրութիւնը կանոնաւորելու եւ նրանց որդեգրելու մասին։ Ենթադրվում է ամուսնութիւնից առաջ ծնված զաւակներին տալ այն բոլոր իրաւունքները, որոնցով օգտվում են այժմ ընդհանուր հիման վրա միւս դասակարգերում ամուսնութիւնից առաջ ծնվածները։

—

Ստացանք. 1) «Մէլիք-Բէգլար» պատմական պօէման, հեղինակութիւն Յարութիւն Թումանեանի. գրքոյկը բաղկացած է 24 երեսից եւ արժէ 10 կոպէկ։ 2) Էջմիածնից, Աշոտ վարդապետից «Օրացոյց 1900 թուականի»։ Օրացոյցային մասին աւելացրած է մի «Յաւելուած», որ կազմել է Աշոտ վարդապետը։ Յաւելուածը պարունակում է իր մէջ երկրաբանական, աստղաբաշխական, արհեստագիտական եւ բարոյախօսական յօդուածներ։ Օրացոյցի մէջ կան մի քանի պատկերներ։

—

Ախալքալաքի գաւառի ԲԱՐԱԼԷԹ գիւղից մեզ գրում են. «Գրեթէ մինչեւ այժմ էլ երկրի թեթեւ ցնցումները կրկնվում են Բարալէթի գաւառամասում։ Ամսիս 22-ին տեղի ունեցաւ բաւական խիստ ցնցում, որ տապալեց աւերակ գիւղերի վերջին մնացորդները։ Մեծ Սամսարում փուլ եկան չորս տուն, որոնցից երկուսում ապրում էին այդ գիւղում մնացած երկու ընտանիքներ։ Զորս հոգի մնացին փլատակների տակ։ Բանուորների ահագին բազմութիւնը չուարած վազվզում էր այս ու այն կողմը ու սրտակոտոր յուսահատ աղաղակներով լցնում օդը։ Սարսափի առաջին բոպէից յետոյ իսկոյն փորվեցին նոր փլատակներն ու ազատվեցին կիսամեռ զոհերը, որոնց մեծ դժ-

ւարութեամբ կարելի եղաւ ուշքի բերել։ Եթէ այդ գիւղերում անվնաս մնար լինէին ու նրանց մէջ բնակվող մարդիկ, անտարակոյս կը լինէին եւ ոչ սակաւ մարդկային զոհեր։ Բայց, բարեբաղդաբար, տեղական կոմիտէի կարգադրութեամբ, աղէտի վայրերում գրեթէ չը կան ընտանիքով ապրողներ, իսկ բանւորների ու անասունների պահողները բնակվում են ձմեռային վրաններում, որ ուղարկել է կոմիտեն։ Տներ փլել են նաեւ Բէժանայում։ Ժողովրդի սարսափը կրկնապատիկ է։ Նոյն իսկ վրանների մէջ չեն ուզում ապրել։ Կոմիտեի ճաշարանները արդէն բացված են եւ օրական մի անգամ տաք կերակուր են մատակարարում բանւորներին ու անտուն ժողովրդին Ականայ, Բէժանա, Մերենիա, Իստիլա եւ երկու Սամսարներում։ Դեռ այստեղ է Կաթողիկոսի պատւէրով Մատթէոս վարդապետը, որը Ախալքալաքի եկեղեցում պատարագից յետոյ մի ազդու քարոզով հրաւիրեց ժողովրդին օգնութեան ձեռք մեկնել աղէտի զոհերին, որոնց սոսկալի թշուառութիւնն ու կարիքները ինքը տեսել էր անձամբ։»

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Յունվարի 22-ին Բաթումի մի խումբ հայ երիտասարդներ բոլորիս յայտնի Իւրի Վասիլիւկու գրական գործունէութեան տասնամեակը յարգելով, ուղարկեցին հետեւեալ հեռագիրը. «Ռուսաստանի մեծ ընտանիքի փոքրիկ որդիները, կենտրոնի հեռու ծայրից միանում են յարգելի յոբելեարի գրական չնորհալի գործունէութեան կատարելիք տասնամեակի տօնին, եւ ըստ ռուսաց սովորութեան երդում են երկար տարիներ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԻՏՆԵՐԸ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

Շատ անգամ մամուլի մէջ արձանագրված է այն փաստը, որ Անգլիայի երկու մեծ կուսակցութիւնների արտաքին քաղաքականութիւնը բոլորովին միանման է, մանաւանդ այնպիսի հարցերում, որոնք էական նշանակութիւն ունեն երկրի շահերի համար։ Եթէ եղել է մի ազատամիտ մինիստր, որ Թիւրքիայի լծի տակ ճնչվող սլաւոնների ազատութեան հարցում եւ նոյն իսկ Հարաւային Աֆրիկայի հանրապետութիւնների վերաբերմամբ ունեցել է պահպանողականների հայեցակէտից տարբեր հայեցակէտ եւ գործել է նրանցից տարբեր ուղղութեամբ, դա եղել է մի Գլադստոն, որ եզակի տեղ է բռնում նոյն իսկ պետական խորիմաստ անձերով հարուստ Անգլիայում։ Բայց ընդհանրապէս ազատամիտ մինիստրները ոչնչով չեն տարբերվել իրանց պահպանողական ընկերակիցներից այն ժամանակ, երբ հարկաւոր է եղել բրիտանական առիւծի թաթը ցոյց տալ օտարներին։

Այն երկար ճառերը, որոնք մօտ օրերումս արտասանվեցին անգլիական պարլամենտում երկու կուսակցութեան նշանաւոր հռետորների կողմից, մի անգամ եւս ապացուցանում են, որ իր տան մէջ երկդիմի Եանուսը օտարի յանդիման կազմում է մի սերտ ամբողջութիւն, մի անբաժանելի Ջոն-Բուլ, որ պատրաստ է իր շահերի համար խեղդել թէ մեծ եւ թէ փոքր ազգութիւններին, որոնք կը համարձակվեն նոյն իսկ իրանց ամենանուիրական բանը, իրանց հայրենիքի անկախութիւնը պաշտպանել Անգլիայի ոտնձգութիւններից։

Կարդացէք ազատամիտ կուսակցութեան պարագլուխների եւ պահպանողական մինիստրների յիշեալ ճառերը, որոնք համառօտակի հաղորդվեցին մեզ վերջին օրերում ռուսաց գործակալութիւնից։ Տարբերութիւնը երկու կողմի հռետորների արտասանած ճառերի մէջ անգլօտրանսվաալեան պատերազմի մասին, վերաբերում է փաստերի լուսաբանութեանը, այն ինչ բոլորի վերջնական եզրակացութիւնը—որ ամենակարեւոր կէտն է այդ ճառերի մէջ—նոյնն է բոլորովին։ Մինչ Սալսբիւրի, Զեմբերլէն եւ Բալֆուր պատերազմի մեղքն իրանց վրայից քերելով՝ ձգում են այն «մեծ ծերունու վրա», որ արդէն ամենայն աշխարհային, դրա հետ միասին եւ Տրանսվաալի հաշիւը վերջացրած, խաղաղ հանգչում է Ուստմինիստրեան աբբայութեան լուռ կամարների տակ եւ այլ եւս հնարաւորութիւն չունի պատասխանել մեռած մարդու վրա բարդվող պղծարանութիւններին, Բոզբերրի, Կեմպբէլ-Բաններման, Գրէյ եւ Բրայս ընդդիմադրականները պատերազմի մեղքը ձրգում են ամբողջովին ներկայ կառավարութեան վրա՝ առարկելով, թէ պէտք չէր հրաժարվել երկար տարիներով փորձված աւանդական քաղաքականութիւնից Հարաւային Աֆրիկայում, որ իսկապէս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նոյն հալածանքը բօէրների դէմ, նոյն ջանքը անգլիական գերիշխանութիւնը հաստատելու այդ ընդարձակ երկրում, միայն աւելի մեղմ, աւելի քողարկված միջոցներով։

Եթէ ազատամիտների պարագլուխներից մէկը յայտարարում է ի լուր աշխարհի, թէ պատերազմն անարդար է, այդ դեռ չէ նշանակում, թէ նա տրամաբանական մի պարզ հետեւանք կը հանէ իր յայտարարութիւնից եւ կեզրակացնէ, թէ որովհետեւ պատերազմն անարդար է, որովհետեւ նա սկված է մի անմեղ ժողովրդի դէմ, որ անձնապաշտպանութեան զգացմունքից միայն դրդված զէնք է բարձրացել վիթխարի կայսրութեան հետ կռուելու, ուրեմն պէտք է միջոցներ որոնել դադարեցնելու անմիջապէս այդ անարդար պատերազմը, միջոցներ, որոնք կարող էին եւ վիրաւորական չը լինել Անգլիայի համար, որպէս վիրաւորական չէր նոյն հանգամանքներում կապված խաղաղութիւնը Գլադստոնի միջոցով 1884 թ-ին։ Բայց ոչ, բոլոր ազատամիտների եւ պահպանողականների ճառերի վերջում նոյն բացականչութիւնն է—«այնու ամենայնիւ կարթագէնը պէտք է կործանվի»—Բոզբէրրի, Բաններման, Սալսբիւրի եւ Զեմբերլէն միաբերան յայտնում են, որ անգլիական դրօշակը այնու ամենայնիւ վերջ ի վերջոյ պէտք է ծածանվի Պրետորիայում եւ Բլումֆոնտեինում։ Ահա թէ ինչպէս են հասկանում անգլիական ազգի քաղաքագէտները քսաներորդ դարի չէմքում անարդար պատերազմին վերջ դնելու եղանակը, ցանկանալով ծերուկ հնութեան հայրենասէրի նման, իրանց հայրենիքի փառքը հիմնել ուրիշի հայրենիքի փլատակների վրա։

Բայց եւ այնպէս անգլիական մեծ ազգի մէջ, որ այժմ այնպէս վառված է հայրենասիրական զգացմունքով, նոյն իսկ այժմ իսպառ չէ խեղդված արդարութեան ձայնը, որ հնչում է Գլադստոնի արժանաւոր յաջորդ Ջոն-Մորլէյի բերանով։ Իր ընտրողների առաջ մօտ օրերումս խօսած ճառի մէջ ահա թէ ինչ է ասում նա.

«Ինչպէս լսել եմ, շատերը ձեզանից ենթադրում են, թէ ես անտարբեր եմ Անգլիայի մեծութեան, կայսրութեան փառքի վերաբերմամբ։ Ես չեմ կարողանում հասկանալ, թէ իմ որ արարքը կարող էր այդպիսի ենթադրութեան առիթ տալ։ Ես չեմ սիրում «կայսրութիւնը»։ Ես աւելի հաճութեամբ երեւակայութեանս մէջ գծագրում եմ մեծ համախմբումն այն պետութիւնների, որոնց կենտրոնը մեր կղզին է։ Եթէ ձեզ ցանկալի է «կայսրութիւն» անուանել այդ, թող այդպէս էլ լինի, բայց «կայսրութիւն» խօսքը շատ մօտ է տիրապետութեան, ազգերի բաղդը, նոյն իսկ հակառակ այդ ազգերի ցանկութեան, տնօրինելու մտքին, իսկ այդպիսի մտքի դէմ ես բարձրաձայն բողոքում եմ եւ կարծում եմ, որ նա չէ կարող նպաստել մեր հայրենիքի դրութեան հաստատութեանը»։

Իբրեւ եզրակացութիւն Ջոն-Մորլէյ ասաց, թէ այժմեան պատերազմն անարդար է եւ կարելի էր ու հարկաւոր էր խուսափել նրանից։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Շօվինիստ լրագիրները լրտեսութեան վերաբերեալ նոր գործ են գտել։ «Patrie» խորհրդաւոր կերպով հաղորդում է, թէ Տիւլերիի պալատի մօտ ձերբակալված է մի բավարացի կապիտան, որի վրա լրտեսութեան կասկած կայ։ Բայց «Petit Bleu»-ի ասելով դեռ ևս պարզված են հետեւեալ փաստերը։ Յունվարի 18-ին գաղտնի ոստիկանութիւնը Տիւլերիի պալատի մօտ գտնվող հիւրանոցներից մէկում ձերբակալեց մի գերմանական հպատակի, որ նոր միայն Մօնակօյից եկել էր Պարիզ։ Ոստիկանութիւնը վաղուց հետեւում էր նրան եւ նա 1887 թ-ին մի անգամ արդէն արտաքսված էր Ֆրանսիայից։ Հետախուզութեան ժամանակ նրա մօտ ոչինչ կասկածելի բան չէ գտնված։ Ըստ երեւոյթին ձերբակալվածը օֆիցէր չէ։

—Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրներին, Կ. Պոլսի հայկական եւ յունական լրագիրները ջերմութեամբ ողջունում են Թիւրքիայում ապրող հայերի եւ յոյների մէջ նկատվող եղբայրական սերտ միութեան նշանները։ Թիւրքիայում նեղվող երկու քրիստոնեայ ազգութիւնները մի կերպ կարծես առիթ են որոնում եկեղեցու բեմի բարձրութիւնից ամրապնդել իրանց եղբայրակցութիւնը։ Այսպէս, օրինակ, Ամասիայում, Փոքր-Ասիայում, յունական համայնքը, որ բաղկացած է 200 ընտանիքից, երկար ժամանակ պառակտվում էր, երկու կուսակցութեան բաժանված, որոնց գլուխ էին կանգնած երկու անհաշտ թշնամի քահանաներ։ Յոյն համայնքի պատուաւոր անդամների բոլոր ջանքերը վերջ դնելու այդ երկպառակութիւններին՝ ապարդիւն անցան։ Այն ժամանակ այդ մարդիկ դիմեցին տեղական հայ առաջնորդ Արիստակէս վարդապետ Վանքեանին, խնդրելով միջնորդ դառնալու դեր յանձն առնել եւ հաշտեցնել երկու կուսակցութիւնը։ Վարդապետը մեծ հաճութեամբ յանձնառու եղաւ կատարել յոյների խնդիրքը։ Լսելով առանձին-առանձին եւ մանրամասնաբար երկու կողմի գանգատաւորների յայտարարութիւնները եւս, նա այնպիսի արդար եւ խելացի վճիռ կայացրեց, որի հակառակ ոչինչ չը կարողացան առարկել թշնամի կուսակցութիւնների պարագլուխները։ Նրանց մեծամ էր միայն փոխադարձաբար զիջանել միմեանց եւ ապա լիովին հաշտվել։ Դրանից յետոյ յոյներից պատուաւոր անձինք պարտք համարեցին իրանց խորին չնորհակալութիւնը յայտնել խաղաղարար վարդապետին եւ խնդրեցին նրան ներկայ լինել պատարագին յունաց եկեղեցում եւ ապա քարոզ խօսել։ Արիստակէս վարդապետի ջերմ քարոզը քրիստոնէական սիրոյ եւ եղբայրութեան մասին սաստիկ յուզեց աղօթաւորներին, որոնց մէջ կային եւ շատ հայեր։

—«Corriere di Napolo» հաղորդում է իր աշխատակցի խօսակցութիւնը Պարիզի անգլիական դեսպան Մօնսօնի հետ։ Հերքելով այն լուրը, թէ Անգլիան մտադիր է իր զօրքերը փոխարինել Եգիպտոսում իտալականով, Մօնսօնը աւելացրեց, «Մենք պակասութիւն չենք զգում ոչ զէնքի, ոչ զինւորի եւ մենք յաղթող կը հանդիսանանք մենակ, բոլորովին մենակ հարաւային Աֆրիկեան պատերազմում։ Բօէրները ապստամբներ են, որոնց Անգլիան կը հնազանդեցնէ։ Մենք պատերազմում ենք ամենարդար եւ ամենասուրբ գործի համար եւ եթէ Աֆրիկան գերեվման դառնար նոյն իսկ մեր բոլոր որդոց համար, մենք այնտեղից յաղթող կը վերադառնանք»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

26 յունվարի

ԼՕՆԴՕՆ։ Այսօր Ջոն Բեգմօնտ միաձայն իրլանդական ազգային կուսակցութեան պարագլուխ ընտրվեց։

Համայնքների ժողով։ Աւագ-խորհրդական ստատս-սեկրետար Ուինդդէմ յայտնում է, թէ այժմ կառավարութիւնը մտադրութիւն չունի Հնդկաստան կամ Հարաւային Աֆրիկա ուղարկած զօրքերը փոխարինելու նորերով։ Բալֆուր նկատում է, թէ Անգլիան ուտելիքի պաշարեղէնները երբէք չէ համարել պատերազմական մաքսանենգ ապրանք. բայց այն ուտելեղէնները, որոնք ուղարկվում են պատերազմող զօրքերի համար, միջազգային իրաւունքի տեսակէտից միաձայն մաքսանենգ ապրանք են համարվում։ Դիլլօն հարցնում է, թէ ինչ հիմունքներ պէտք է ի նկատի առնվեն այդ հարցը վճռելիս։ Բալֆուր առարկում է, թէ գործի փաստական մասին վերահասու պէտք է լինի «պարգեւատու դատաստանը»։ Ապա Դիլլօն հարցնում է. թէ մտադիր է արդեօք բրիտանական կառավարութիւնը հրամանագրել բոլոր անգլիական պատերազմական նաւերին գրաւել Լօրէնցօ-Մարկեզ ուղարկվող բեռները մինչ այն ժամանակ, երբ «պարգեւատու դատաստանը» կը քննէ նրանց գրաւելու կամ չը գրաւելու հարցը։ Բալֆուր պատասխանում է, թէ այդ կէտի վերաբերմամբ նա ոչ մի բան յայտնել չէ կարող։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Բրոդրիկ կարդում է Պարսկաստանի ռուսական փոխառութեան պայմանները եւ աւելացնում է. «Մենք ոչ մի հիմք չունենք ենթադրելու, թէ գոյութիւն ունի որ եւ է համաձայնութիւն, որով Բենդեր-Աբասի մաքսային արդիւնքները գրաւ են առնված ռուսաց կառավարութեան կողմից»։ Վիճաբանութիւնները վերսկսվելուց յետոյ Ասկվիտ յայտնում է, թէ անգլիական կառավարութիւնը ոչ մտադրութիւն եւ ոչ ցանկութիւն ունէր պատերազմ մղելու եւ թէ Կրիւգերը կարող էր խուսափել նրանից։ Կրիզիսից առաջ արած առաջարկութիւնները մերժվեցին, իսկ դրանից յետոյ տեղի ունեցաւ բօէրների ներսխուժումն դէպի մեր սահմանները եւ մեր տիրապետութիւնների միացումն Հարաւային Աֆրիկայի հանրապետութեան պատկանող երկրներին։ Անհրաժեշտութիւնը եւ պարտքը ստիպում են մեզ շարունակել պատերազմը. մի եւ նոյն ժամանակ մենք պէտք է ապացուցանենք աշխարհին, թէ միութիւն է տիրում ինչպէս մեր պարլամենտում, այնպէս էլ ժողովրդի մէջ։ (Հաւանութեան ցոյցեր)։ Նը-պատակը, որին պէտք է մենք դիմենք, կայանում է հարցի այնպիսի վճռի մէջ, որի չնորհիւ երկու ցեղի ներկայացուցիչները հաւասար իրաւունքներ կը ստանան Հարաւային Աֆրիկայում։ Իբրեւ զեկավարող սկզբունք պէտք է ընդունել ոչ առաջնութիւնը, այլ հաւասարութիւնը։ Մի ցեղի գերիշխանութիւնը չը պիտի փոխարինվի միւս ցեղի գերիշխանութեամբ։ Վերջում Ֆիցմօրիսի առաջարկութիւնը մերժվեց 352 ձայների առաւելութեամբ ընդդէմ 139-ի։

ԼՕՆԴՕՆ։ Լէդի-Սմիթի մօտ գտնվող բօէրների բանակից հաղորդում են յունվարի 24-ին, թէ առաւօտեան ժամը 5-ից այնտեղ թնդանօթաձգութիւն է տեղի ունենում։

ՎԻԵՆՆԱ։ «Neue Freie Presse» լրագրի ասելով, չեխական ազնուականութեան եւ երիտասարդ չեխերի կուսակցութեան ներկայացուցիչների մէջ տարաձայնութիւններ սկսվեցին, որովհետեւ ազնուականները հրաժարվեցին միանալ այն յայտարարութեանը, որ Էնգէլը արեց երէկ երիտասարդ չեխերի անունով Զէխիայի եւ Մօրավիայի ազգայնական հարցերը կարգաւորելու համար հրաւիրված յանձնաժողովում։ Ինչպէս հաղորդում է նոյն լրագիրը, Էգերեան դաշնակցութեան գերմանական արժատական ներկայացուցիչները մինիստր-նախագահին մի յայտարարութիւն ներկայացրին, որի մէջ խօսվում է Էգերեան դաշնակցութեան պետականիրաւային կարգի պահպանման մասին չեխերի վերաբերմամբ եւ բողոք է յայտնվում Էգէրի եւ Բոհի շրջաններում չեխական լեզուն մոռացնելու դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բացվեց հիդրօ-տեխնիկների եւ ջրային ճանապարհների վրա ռուս գործիչների համագումար ժողովը։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Վերջում Կէմպբէլ-Բաններման պաշտպանեց ընդդիմադիր կուսակցութեան իրաւունքը՝ պախարակելու կառավարութիւնը, որովհետեւ «գալլերը ամենուին կանգնած չեն Հոօմի դռների առաջ» եւ երկիրը ոչ միայն բոլորովին չէ ստորացած, այլ նոյն իսկ այնպէս է պահում իրան, որ արժանի է զարմանքի։ Ընդդիմադիր կուսակցութիւնը ցանկանում է, որ պատերազմը շարունակվի մինչեւ մօտալուտ վախճանը. նա ցանկանում է խաղաղութիւն եւ համաձայնութիւն Հարաւային Աֆրիկայում, ցանկանում է պատերազմին այնպիսի վերջ, որ գրաւական տար ապագայ զինւորված ընդհարումների եւ ցեղական գերիշխանութեան դէմ եւ տանէր դէպի քաղաքական հաւասարութիւն։ Բալֆուր ասում է, թէ նախատինք յայտնելու առաջարկութիւնը նշանակում է յարձակվել Զեմբերլէնի վրա, բայց Զեմբերլէնը բարձր է կանգնած այդ յարձակումներից, որովհետեւ նրա պաշտօնավարութեան ժամանակ Միայն Մեծ-Բրիտանիան առաջին անգամ իմացաւ, թէ ինչ է նա եւ ինչ բանի համար է նշանակված։ Նրա տաղանդին ենք պարտական, որ բոլոր գաղթականութիւնները միացան մայրերկիրը պաշտպանելու գործում։

27 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կովկասեան 5-դ հրացանաձիգ բատալիոնին հրամայված է անուանվել այսուհետեւ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Գէօրգի Միխայլովիչի 5-դ կովկասեան բատալիոն։

Գէներալ-մայոր Սամօյլով նշանակվում է Կարսի շրջանի զինւորական նահանգապետ։

Թագաւոր Կայսրը բարեհաճեց, որ պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկի եւ գնդապետ իշխան Օրբէլիանի ընդունեն Աստրախանի նահանգի Ցարեվ քաղաքի պատուաւոր քաղաքացու կոչումը։

ԼՕՆԴՕՆ։ Զինւորական մինիստրութիւնը հաստատում է, որ Բուլլէր յունվարի 26-ին կրկին անցաւ Տուգէլա եւ գտնվում է Լէդի-Սմիթի ճանապարհի վրա։

ԼՕՆԴՕՆ։ Տուգէլա գետով Բուլլէրի զօրքերի անցնելու մասին զինւորական մինիստրութեան տեղեկութեանը աւելացրված է, որ գործողութիւնները դեռ շարունակվում են, բայց նրանց հետեւանքների մասին դեռ ևս ոչինչ տեղեկութիւն չէ ստացված։

ԲՕԷՐՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ, Լէդի-Սմիթի մօտ, յունվարի 26-ին։ Երէկվան օրից բրիտանացիները ռմբակոծում են բօէրների դիրքերը վերին Տուգելայի վրա ծովային եւ ուրիշ թնդանօթներով։ Բրիտանական զօրքերն անցկացան գետը Պոնտրիֆտի եւ Մօլէնդրիֆտի մօտ՝ Պոնդդրիֆտի մօտ եղած դիրքը գրաւելու համար։ Գեներալ Բուրդէր յետ մղեց նրանց, եւ նրանք մեծ անկարգութեամբ նորից Տուգէլայի այն կողմն անցան։ Մօլէնդրիֆտի մօտ շարունակվում է կռիւը բօէրների հետ։ Բօէրները ոչինչ կորուստներ չունեցան։ Թնդանօթների որոտումը լսվում էր ամբողջ օրը։ Այսօր առաւօտեան թնդանօթաձգութիւնը վերսկսվեց ա-

ելի եւս չատ թնդանօթներով։ Տուգէլայի վրա երէկվայ պատերազմի մէջ անգլիացիները մեծ կորուստներ ունեցան։ Մօլէնդրիֆտի մօտ նը-բանք գրաւեցին մի անուշ բլուր, որը դեռ պահում են իրանց ձեռքում։ Կորուստները այն-տեղ անայլայլ են։ Օրանժեան բօէրներից սպան-վեցին չորս հոգի։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի Բոսսէլ խօ-սում է Բէդֆոնդի յաւելուածի դէմ, որի մէջ առաջարկվում է զիջողութիւն, այն ինչ թշնա-մին դեռ եւս բրիտանական հողի վրա է գտն-վում։ Համայնքների ժողովը չի ցանկանայ երկ-րորդ Մաուբի կրկնութիւնը եւ անձնատուր չի լինի այնպիսի ամօթալի պայմաններով, որ-պէս էր 1881 թուին։ Վերջում Բէդֆոնդի յաւել-ուածը մերժվեց 368 ձայնով 66-ի դէմ։

ՊԷԿԻՆ։ Այժմ բոլորը կարծում են, որ կայս-րուհին չի վստահանայ պաշտօնապէս գահընկ-էց անել կայսրին, որովհետեւ վախենում է, որ այդպիսի քայլին լուրջ կերպով կը դիմադ-րեն հարաւային Չինաստանում։

ՊԱՐԻԶ։ Արտաքին քաղաքականութեան չը-ջանում նորերս կատարված անցքերի առիթով «Figaro» լրագրի աշխատակից Վէիսա գրում է. «Ես նորերս ընդգծեցի Ռուսաց Կայսրի հրա-վարտակը Նրա արտաքին գործերի մինիստրին, որի մէջ գովաբանված էր նրա անկեղծ վերա-բերմունքը գործին։ Աղնիւ Թագաւորի յայտ-նած գովաբանութիւնների մէջ առաջին տեղն էր տուած ռուս-չինական յարաբերութիւնների աջող տանելուն, որը միջոց տուեց Ռուսաստա-նին հաստատել իր ազդեցութիւնը։

«Երբ ծագեց անգլո-տրանսվալեան պատե-րազմը, Ռուսաստանի աջողութիւնները արդէն չատ մեծ էին, եւ այդ ժամանակից ռուսաց դիպլոմատիայի ջանքերը տարան ոչ պա-կաս նշանաւոր յաղթութիւն։ Պարսկաստանում նոյնպէս Անգլիայի բուն դրած աւանդութիւն-ների նպատակն էր՝ հող պատրաստել Անգլիայի ամենաշօրութեան համար եւ այդ բանի համար կուել Ռուսաստանի դէմ ամեն օր եւ ամեն ժամ, բայց ռուսաց կառավարութեան իմաստուն գործողութիւնները ի դերեւ հանեցին Անգլիայի բոլոր հաշիւները Պարսկաստանում»։ Վերջում Վէիսա ասում է. «Եթէ վաղը Եգիպ-տոսում մի որ եւ է դէպք պատահի, մենք կը տեսնէինք, թէ ինչ կը մնար բրիտանական զօ-րութիւնից այն սահմանների վրա, ուր նա իր ասելով, ապահովված է որ եւ է վտանգից»։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ուղերձի մասին վիճաբանութիւնների շարունակութիւնը։ Բէդֆոնդ մտցնում է իրլանդական նացիոնա-լիստների առաջարկութիւնը, որի միտքն է՝ վերջացնել պատերազմը եւ ընդունել հանրա-պետութիւնների անկախութիւնը։ Բէդֆոնդ յայտնում է, որ իրլանդացիների համակրութիւ-նը բօէրների, արդարութեան եւ ազատութեան կողմն է։ Իրլանդացիները գոհունակութիւն են զգում այն բարդութիւնների առիթով, որոնց ենթարկվում է Անգլիան։ Բայց նրանց վերա-բերմունքը պատերազմի հարցին դրանից չէ կախված։ Հոսանքը մատնացոյց է անում ամ-բողջ աշխարհի դատաստանի վրա, որը անի-ծում է այդ պատերազմը։ Անգլիան ոչ թէ փա-ռաւոր, այլ ամօթալի առանձնացած դրութեան մէջ է գտնվում եւ միմիայն Թիւրքիայի շնորհ-ներն է վայելում։ (Ծափահարութիւններ իր-լանդացիների նստարանների վրա։)

ԲՕՄԲԷՅ։ Մահվան դէպքերի թիւը երէկ չը տեսնված թուին հասաւ—408։ Էպիդէմիական բնաւորութիւն են ընդունում եւ ուրիշ հիւան-դութիւններ։ Իրերի դրութիւնը աւելի եւս վատանում է այն պատճառով, որ այստեղ փա-խել եկել են սովատանջ տեղերի բնակիչները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆԻՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ

Ուրբաթ, յունվարի 28-ին,

ԹՐ. ՎԱՐԴԻԹԵՐ

մասնակցութեամբ դերասանական խմբի՝ կը ներկայացնէ

,,ԱՆՄԵՂ ՄԵՂԱՒՈՐՆԵՐ''

Կօմ. 4 գործ., հեղ. Օստրովսկու, թարգմ. Ա-տովմեանի։

Մասնակցում են՝ օր. Վարդիթեր, Մարի-Հրանոյշ, տ.տ. Զաբէլ, Աղնա, պ.պ. Տէր-Դաւ-թեան, Միրզաեան, Մամիկոնեան, Ամիրեան, Միրզայեան եւ այլք։

Սկիզբն է 8½ ժամին։ 1—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԵԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Ռ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժու-թեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվաճի 9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երե-խայոց հիւանդ.
Ի. Ֆ. Պրօսասովիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երե-խայոց հ.
Ա. Դ. Դուրկօ—1¼—2 ժ. ներքին հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. Պրօսասովիչ—5—6 ժ.
Ա. Ն. Թալակօվսկի—6—7 ժ. նեարդային (էլեկ-տրաբուժութիւն), վենէրական և մորթի հ.
Ռ. Ա. Նաւասարդեան—7—7½ ժ.
Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցա-կան հետազօտութիւն մէզի, խիի և արեան։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօն-կիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիսակի—տանը. ծաղկոտ և բժշ-կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

81—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ

Յարութիւն Թումանեանցի

ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱՐ

Պատմական պօէման

Գինն է 10 կօպ.

Դիմել՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская ул. д. Маркарова № 25-а.

1—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

ՕՐԻՈՊ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ։

Հասցէն՝ Красногорская ул. № 14. 16—20

Ներսիսեան դպրոցի ՄԻ ԱՇԱԿԵՐՏ, որ չքաւորութեան պատճառով չէ կարողանում շարունակել ուսումը, բարեգործների օգնութիւնն է խնդրում։ Հասցէն «Մշակի» խմբագրատանը։

2—3

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պատաժ, Թամամշեվի քարավան-սարայի հանդէպ։

Հրաւիրում է պ.պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (դրա համար վերցնվում է 20 կօպ.), որ չատ դիւրութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին։ Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ։ Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ։ Ցանկացողները թող դիմեն գրասենեակ։

№ 1. 0—6

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ ՀԱՄԱՐ

5000 հատ 70—900 թուականների Պարսկաստանի զանազան նամակագրօչիներ ունեմ. ցանկացողը դիմէ «Մշակի» խմբագրութեան։ 5—5

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺ. ՄԻԽԱՅԻԼ ԳԷԴԷՎԱՆՕՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից։

Առաւօտեան՝

Վ. Ի. Ռիճինադզէ—ատամների հիւանդ. 8—10 ժ.
Գ. Գ. Մաղալով—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Ն. Ս. Մորիվին—ականջի, կոկորդի և քթի հ. ամեն օր 10½—12 ժ.
Եֆիմի Պաւլովիչ Գաւրիլին—ներքին և երեխաների հ. ամենայն օր ժ. 11—12, բացի շաբաթ օրերից։
Ա. Ն. Շանիլով—աչքի հ.—12—1 ժ.
Ն. Զ. Ուխիկով—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12—1 ժ.
Վ. Լ. Մարկեվիչ—վիրաբուժական հ. 12—1 ժ. և երեք-շաբթի օր 3—4 ժ.
Ի. Դ. Բեգթաբեգով—վենէրական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. Գէդէվանով—նեարդային և էլեկտրոտերապիա, 1—2 ժ.

Երեկոները՝

Դ. Ա. Գէդէվանով—ներքին և երեխաների հ. (ծաղ-կահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. Թումանով—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.

Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալ-ներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիա-կան հետազօտութիւնների համար։

Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով։ Նիկոլաեւսկայա փողոց, Վօրոնցովի արձանի հան-դէպ, տ. Սաղինովի, № 11

Հիւանդանոցի վերատեսուչ՝

0—15 Միխայիլ Գէդէվանով

Թիֆլիսի Այգեգործական դպրոցը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թուի աշնան և 1900 թուի գարնա-նամուտում է նոյն այգեգործական դպրոցում, պակասեցրած գներով մօտ 4000 մէկ և երկու տա-րեկան ամենաարնտիր տեսակների մրգեղէն ծառեր և 50,000-ից աւելի զարդածառեր, փշածառեր, մշտադալար և տերևազարդ ծառեր և թուփեր մէկ տարեկան հասակից մինչև հինգ։

(Ա. Հ. չ.)

35—40

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, ե-բաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հան-դերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1900 թուի յունվարի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ, իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կօպէկ։ Օտա-բաղաքացիները դիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։

15—20

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ ՊԱՂՏԱՏԻ

Արտասահմանեան ծանօթ զանազան ֆիրմաներից պատրաստված եւ Թիֆլիսի Շերամապահական ուսումնարանում քննված, առաջին կարգի եւ սպիտակ բանդրօլով կնքված

ՊԱՂՏԱՏԻ ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Ծախվում է յարմար գներով Թիֆլիս, Շագինովի քարավանսարայ, Կ. Ս. Կիւլպէնկեանի մօտ, թիւ 19։

3—5

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ ՊԱՂՏԱՏԻ

Պատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ՂԱՐԱԲԱՂԻ»



ՁՐԱՂԱՑԱՔԱՐԵՐ

մատչելի գներով և զանազան մեծութեան։

Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.

Որովհետև վերջերս երևացել են նաև ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ չատ յաղթ են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ։

32—40 Քարահանքի կապալառու՝ Աբրահամ Հասան-Զալալեանց

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

За успѣшнія занятія благодарности.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ января мѣсяца. 19—100

Преподав. ведется по собств. сочиненіямъ.

Годъ занятій десятый.

Բժշկարար Կէֆիր եւ Կումիս

Օ. ԿՕՐՕՆԱ

Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալ-ների՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար։ Կարե-լի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների ամառնային ընկերութեան խանու-թին կից։

Ուսուցիչներին, ուսանողներին և ամառնային ընկ, անդամներին կը լինի զիջում։ Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայանեն բժշկից առանձին դեղատոմս։

Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել։ 28—50

Առևտրական մարկան հաստատված կառավարութիւնից։

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ

պալատի հայթայթողներ

ԹԷՅԻ ԱՌԵԻՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՕՑԿԻ եւ ԸՆԿ.

Մօսկվայում.

ԲԱՑՎԱԾ Է Ն. Տ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ից ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Թիֆլիսում

Մայդան, տ. Գ. Ե. ԲԱՅԱՆԴՈՒՐՕՎԻ

Ընկերութեան թէյը ծախու է գտնվում բոլոր լաւ մագազիններում։

8—20

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Января 1900 г.

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.